

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Գ Է Օ Թ Է Ի

Թարգմանութիւնն քնագրից ԲԺ. ԼԵՒՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆՑԻ

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Չ Ի Ց

Եւ չանդհնեցի նաւել բանաստեղծների գեղեցիկ աշխարհի մէջ և ձեռնարկեցի թարգմանել Գէօրգէի «Ֆաուստ»ը իմ սիրած հայերէնիւ, Խնչու, Տեսնելով որ շեռ գրականութեան մէջ կալ մի արձակ փեղ, ուր պէտք է գեղեցիկութեամբ լինի «Ֆաուստ»ի թարգմանութիւնը, որպէս մի կլասիկական գրութեամբ, աշխարհի ֆաուստը թարգմանել քնագրից արձակ և բառացի:

Եւ աշխատել եմ թարգմանել բառ առ բառ, միտք առ միտք և կէտ առ կէտ ամենաշն ճշտութեամբ, որ չը լինի թէ «Ֆաուստ»ը ուղղած լինեմ, աւելի լաւ է ասել աղբ հեղինակութիւնը աշաւաղած լինեմ: Այն փեղերում, ուր միտքի բացատրութիւնը պահանջել է, աւելացրել եմ՝ համար, որ, ինձ, մարդ և ալն, Շատ սակաւ փեղ մի բալ եմ դրել, որ քննադրում չըկալ, ալ հասկացում է միտքից միայն: Ամենաշն կիրալ աշխատել եմ պահպանել «Ֆաուստ»ի ողին նուշնութեամբ, որ թարգմանութիւնն ունենալ «Ֆաուստ»ի համն ու հոյրը, ալք պարճառով էլ շատ անգամ զոհել եմ լեզուի կոկոսութիւնը: Եւ աղբալս եմ հասկանում մի կլասիկական գրութեամբ թարգմանելու եղանակը:

Բացատրութիւնները վերցրել եմ Շրէօքերից:

Եւ նպատակիս հասած կը լինեմ, եթէ ալս թարգմանութիւնովս կարողացած լինեմ հիմնաւոր գաղափար տալ ընթերցողին ալն գեղեցիկութիւնների և գաղափարների մասին, որոնք առաջադրուած են ֆաուստի

միջ: Թարգմանութիւնովս տալիս եմ մեր հասարակութեանը աչն, ինչ որ ես շատ եմ սիրում: Ընթերցող, շու էլ կարդա, կարելի է, որ շու էլ ինձպէս օրհնա: Եւ աչն բարի ոգիները, որոնք ճախրում են քո շուրջը, թող քաղ-ցրացնեն կեանքիդ տխուր լուսէները միտաւոր գեղեցիկ զուարճութիւն-ներով:

Լ. Տ.

Ն Ո Ւ Ն Բ ¹

Դարձեալ մօտենում էք երերուն սրտերներ ², որ երբեմն յայտնուել էք աշօտ հայեացքիս: Փորձեմ արդեօք այս անգամ ամուր պահել ձեզ: Զգո՞ւմ եմ արդեօք որ սիրտս շու հակած է աչն ցնորքին: Դուք խռնւում էք: Դէ՛հ, լաւ. կարող էք իշխել ինձ, քանի որ գոլորշից և մէգից ամբռնում էք իմ շուրջը: Կուրծքս զգում է երկասարդական երերումն աչն կախարդական աւելնից, որ շաչիւնով շրջապատում է ձեր ընթացքը:

Դուք բերում էք ձեզ հետ ուրախ օրերի պարկերներ և յայտն-ւում են մի քանի սիրելի սրտերներ ³: Հին կիսամար առասպելի նման երեան է գալիս առաջին սէրը և բարեկամութիւնը: Յաւս նորոգւում է, կեանքի տրտունջը բաւիշաձև կրկնում է իր մոլորած ընթացքը և չիշեցնում է աչն բարի անձանց, որոնք գեղեցիկ ժա-մերում, բաշից խաբուած, առջևս անհետացել են:

Ձեն լսում վերջին երգերս աչն հոգիները, որոնց մօտ երգել էմ առաջինները: Փոշիացել է բարեկամական խմբակն, աւաղ, ան-

¹ «Նուէրը» վերաբերում է բանաստեղծի սիրելի բարեկամներին, որոնք արդէն վախճանուել էին և չէին կարող նրա երգը լսել, որ սկսուած է եղել 20 տարի առաջ:

² «Դարձեալ մօտենում էք երերուն սրտերներ» ասելով Գէօթէն մտաբերում է իր երկրասարդութեան ժամանակակից բարեկամներին, որոնք 25 տարի առաջ նրա զրուածքն ուրախութեամբ լսել էին: Այդ բարեկամներից մի քանիսը մեռել էին, միւսները զանազան տեղ էին գրուած: Իրանց սրտերնեքը չայտնում էին նրան: Ֆաուստը՝ բացատրութիւն Բոեզէնի (Boyesen):

³ «Սիրելի սրտերներ» պէտք է ենթադրել, որ վերաբերում է Գէօթէի քրոջ Կորնէլիային, որ վախճանուել էր 1777 թ., նրա բարեկամ Մէրքլին, որ վախճանուել էր 1791 թ. և Ֆրանկֆուրտի Մարգարիտին: Շրէօլը (Schroer):

հեղացել է առաջին արձագանքը: Երգս հնչում է անծանօթ ամբոխին, նաև նրա հաւանութիւնն իմ սրտին երկիւղ է ազդում: Եւ որոնք երբեմն ուրախանում էին իմ երգովը, եթէ նրանք ապրում են, ցրուած թափառում են¹ աշխարհում:

Եւ ինձ հրապուրում է մի վաղուց թողած տենչանք շէպի ոգիների այն հանդարտ և լուրջ թագաւորութիւնը: Անորոշ հընչիւններով տարանում է իմ հագիւ լսելի երգը, որպէս տաւիշն էջոյի, մի սարսուռ պատում է ինձ, արդասուքիս արդասուք է հեղուում, իմ խիստ սիրտը զգում է իրեն մեղմացած և փափկացած: Ինչ որ ունեմ հեռուումն իմ տեսնում և ինչ որ անհեղացել է՝ իրականութիւններ են շառնում իմ համար:

ՆԱԽԵՐԳԱՆՔ² ԹԱՏՐՈՆՈՒՄ

ԿԱՌԱՎԱՐԻՉ, ԹԱՏՐԵՐԳԱԿ, ԿԱՏԱՆԵՐԳՈՒ

ԿԱՌԱՎԱՐԻՉ: Դուք երկուքդ, որ այդքան յաճախ օգնել էք ինձ կարիքի և թշուառութեան ժամանակ, ասացէք, ի՞նչ յոյս ունէք մեր ձեռնարկութիւնից գերմանական երկրներում: Ես չապկը ցանկացի հաճոյնալ ամբոխին, մանաւանդ որ նա ապրում է և ապրել է տալիս: Գերանները ցցուած են, տախտակները խփած և ամեն մարդ տօնախմբութեան է սպասում: Նրանք արդէն նստած են այնտեղ լարուած ուշադրութեամբ և յօժարութեամբ կը ցանկացին զարմանալ: Գիտեմ, թէ ինչպէս պէտք է ժողովրդի հոգին ի մի դարձնել, սակայն ես երբեք այսքան շփոթուած չեմ եղել: Թէպէտ և նրանք լաւագոյնին ընտելացած չեն, սակայն սար-

¹ «Ցրուած թափառում են աշխարհում»: Պէտք է ենթադրել Գէօթէի հետեւալ բարեկամներին: Նակոբի, Ֆլինգէր, Շլոսսեր, Կեստնէր, սրա կիներ և միւս բարեկամները: Մանթոնիւն Շրէօէր՝ ի:

² «Նախերգանքն» առանձին կապ չունի ողբերգութեան հետ և ընդհանրապէս փերաբերում է թատրոնին: Կարակերպուն Ներկայացնում է ծաղրածու դերասանին: Շրէօէր:

սափելի շաք բան են կարդացել: Ի՞նչպէս անենք, որ ամեն ինչ
թարմ ու նոր լինի և նշանակութեամբ նոյնպէս հաճելի: Ի հարկէ
ես ուրախութեամբ կը ցանկացի տեսնել ամբողջ, երբ ներս խու-
ժուէր մեր կրպակը որպէս հոսանք և ուժգին կրկնուած երկունքով
հրուէր ողորմութեան նեղ շրնով: Օրը ցերեկով շեռ չորս ժամից
առաջ, բռնութեամբ զինամարտէր մինչ կասսան և գրեթէ իր շլինքը
կտորէր մի տոմակի համար, ինչպէս կտորում է հացի համար սովի
ժամանակ հացագործի շրանը: Միայն բանաստեղծն է գործում
այդ հրաշքը այդչափ բազմազան մարդկանց վրայ: Բարեկամ, ո՛հ,
կապարիւր այդ այսօր:

ԹԱՏՐՆԵՐԳԱԿ: Ո՛հ, մի՛ խօսիր ինձ հետ այն բազմատեսակ
ամբոխի մասին, որի հայեացքից մեր ոգին խուսափում է: Քողար-
կիւր ինձնից այն կոծուող ամբոխը, որ, հակառակ մեր կամքին, քա-
շում է մեզ շէպի յորձանքը: Ո՛հ, առաջնորդիր ինձ շէպի երկնա-
յին հանդարտ կիրճն, ուր միայն բանաստեղծի համար պարզ ու-
րախութիւն է ծաղկում, ուր սէրը և բարեկամութիւնը, մեր սրտի
օրհնութիւնն¹, աստուածային ձեռքով է ստեղծւում և փայփայ-
ւում:

Աւաղ, ինչ որ բղխել է մեր կրծքի խորքերից, ինչ որ շըր-
թունքն անվտանգութեամբ թռթռում է, ինչ որ անյաշող է եղել
և այժմ գուցէ յաջողուել է, կլանում է բուռն վայրենի ոյժը: Յա-
ճախ, երբ այդ թափանցում է տարիներին միջով, յայտնւում է կա-
տարելագործուած կերպարանքով: Ինչ որ փայլում է, ծնուած է
վայրկեանի համար, ճշմարիտը գալոց սերնդի համար անկո-
րուստ է մնում:

ԿԱՏԱԿԵՐԳՈՂ: Երանի ոչինչ չլսէի այդ գալոց սերնդի մա-
սին: Դիցուք թէ ցանկացի խօսել գալոց սերնդի մասին, այն ժա-
մանակ ռժպէտը է կապալներ անէր ներկայ սերնդի համար: Դա
էլ է ցանկանում այդ և պէտք է լսէ: Կարծեմ, որ մի առոյգ երի-
տասարդի ներկայութիւնն էլ միշտ մի բան է: Ով որ հաճոյաբար
կարող է յայտնել իր կարծիքը, ժողովրդի քմահաճութիւնը նրան
շառնութիւն չի պատճառել: Նա ցանկանում է իր համար մի մեծ

¹ Զգացմունքի արգաւանդութիւն:

շրջան, որ կարողանայ նրան աւելի անտարակոյս կերպով ցնցել: Այդ պարծառով էլ միայն քաջարի եղէք և ձեզ օրինակելի ցոյց տուէք: Թողէք լսեն երեակացութիւնը, իր բոլոր խմբակներով, բանականութիւնը, խելքը, զգայութիւնը, կիրքը, սակայն, լաւ ի նկատի ունեցէք, յիմարութիւնն էլ հետք:

ԿԱՌԱՎԱՐԻՉ: Բայց մանաւանդ աշխատեցէք, որ բաւականին անցքեր տեղի ունենան: Մարդիկ գալիս են նայելու և ուզում են գլխաւորապէս տեսնել: Եթէ բացւում է շատ բան աչքի առաջ այնպէս, որ ամբոխն ապշած, բերանաբաց է մնում, այն ժամանակ դուք ըստ ամենայնի իսկոյն վաստակած էք, դուք դառնում էք մի շատ սիրելի մարդ: Ամբոխի վրայ կարող էք միայն ամբոխով ներգործել, իւրաքանչիւրը վերջապէս ինքն ընտրում է իր համար մի բան: Ով որ շատ է տալիս, ամէն մէկին էլ մի բան կը տայ, և ամեն մէկն էլ բաւականացած դուրս կը գնաց թատրոնից: Եթէ մի թատրոնգութիւն էք տալիս, տուէք այն կտոր-կտոր: Ինչպէս մի բրջան¹ պէտք է ձեզ յաջողութիւն տայ: Հեշտ է այդ առաջարկւում, այնպէս հեշտ, ինչպէս հնարած է: Ի՞նչ օգուտ եթէ դուք ներկայացնում էք մի ամբողջ բան, հասարակութիւնն այնուամենայնիւ մաս-մաս է անելու այդ:

ԹԱՏՐՆԵՐԳԱՆ: Դուք չէք զգում, թէ որքան վատ է մի այդպիսի արհեստ: Որքան սակաւ պարշաճ է այդ մի իսկական արուեստագէտի համար: Ես նկատում եմ, թեթեամիտ պարոնների շաղ-փաբանութիւնը ձեզ համար սկզբունք է²:

ԿԱՌԱՎԱՐԻՉ: Մի այդպիսի յանդիմանութիւն ինձ չի վերաբոլում: Մի մարդ, որ մտածում է ուղիղ գործել, պէտք է ամենալաւ գործիքը ձեռք առնէ: Երեակացեցէք, որ կախող վայր պէտք է ճշէք և տեսէք թէ ո՞ւմ համար էք դուք գրում: Եթէ մէկին ձանձրոյթն է մղում, մի ուրիշը գալիս է յագեցած մի առաջին խնջոյքից և, որ ամենավատն է, շատերը գալիս են լրագրեր կարդալուց: Յիրուցան շրջապում են դէպի մեզ, ինչպէս դէպի դիմակահանդէս, և հետաքրքրութիւնը միայն թեւաւորում է ամեն մի քայլ:

¹ Ուագու (Ragout).

² Ալսինքն—արհեստաւորների օրէնք է:

Տիկնալք ամենալաւ կողմից ցոյց են տալիս իրենց և իրենց զար-
դերը և մեզ հետ միասին անվարձ խաղում են: Ի՞նչ էք երազում
ձեր բանաստեղծութեան բարձունքներում: Ի՞նչ է ուրախացնում
ձեզ, լիթ թաւորոնը: Պաշտօններիդ մօտից նայեցէք: Նրանք կիսով
չափ սառն են, կիսով չափ էլ դժնեայ: Մէկը թաղերախաղից յե-
տոյ յոյս է շնում թշխախաղի վրայ, միւսը մի մոլի գիշեր անց-
նել մի աղճի գրկում: Դուք, ոչորմեղի յիմարներ, աչդպիսի մի
նալափալի համար խնչում էք շար տանջում սքանչելի մուսաներին:
Ես ձեզ ասում եմ, տուէք միայն աւելի և քանի կարող էք աւելի,
այն ժամանակ նպատակից երբէք չէք կարող շեղուել: Աշխատե-
ցէք միայն մարդկանց մոլորեցնել, նրանց բաւականացնելը դժուար
է: Ի՞նչ է ձեզ գրաւում: Զմայլո՞ւմն թէ ցաւերը:

ԹԱՏՐԵՐԳԱՆ: Գնահ և քեզ համար մի այլ վարձկան պտուիւր:
Միթէ բանաստեղծը պէտք է ամենաբարձր իրաւունքը, մարդկա-
յին իրաւունքը, որ նրան պարգեւել է բնութիւնը, քեզ համար
թեթեամբութեամբ ծանակէ: Նա խնչով է շարժում բոլոր սրտերը:
Ի՞նչով է յաղթում նա ամեն մի տարր: Միթէ ներդաշնակութիւնը
չէ, որ բլխում է կրծքից և աշխարհն ամփոփում է իր սրտի մէջ:
Երբ բնութիւնն անտարբերութեամբ ոլորելով թելի մշտնջենաւոր
երկարութիւնը գցում է իլիկի վրայ, երբ բոլոր էակների անդաշ-
նակ բազմութիւնը ձանձրութեով խառնիխառն թնդում է, ո՞վ է
կենդանութիւն տալով բաժանում միշտ հաւասար հոսող շարքը,
որ պարբերաբար շարժուի: Ո՞վ է միակին ընդհանուր նուիրման
հրաւիրում, ուր ամեն ինչ հիանալի ներդաշնակութեամբ է զարն-
ւում: Ո՞վ է փոթորիկին թողնում մոլեգնել շէպի կրքերը, վերջա-
բոյսին փայլել ծանրաբարոյ կերպով: Ո՞վ է սփռում զարնան բոլոր
գեղեցիկ ծաղկափթիթները սիրեկանի շաւղի վրայ: Աննշան կանաչ
տերեւներից ո՞վ է հիւսում փառքի պսակ ամենայն տեսակ վաստակ-
ների համար: Ո՞վ է ապահովում Օլիմպը, չաստածներին միացնում,
մարդու ոյժը յայտնադործում բանաստեղծի մէջ:

ԿԱՏԱԿԵՐԳՈՒ: Ուրեմն զործադրէք գեղեցիկ ոյժերը և վա-
րէք բանաստեղծութեան զործերը որպէս վարում են սիրոյ ար-
կածները: Պատահաբար մօտենում են, զգում են, կանգ են առ-
նում և հետզհետէ թակարդւում են. բախորն աճում է, յետոյ գի-

նամարցումով է ձեռք բերում, յափշտակում են, այնուհետև երևան է գալիս ցաւն, ու մինչև մարդ շրջահայեաց է լինում, արդէն ոռմանը պատրաստ է: Թոյլ տուէք մեզ, տալ մի այդտեսակ ներկայացում: Ձեռնամուխ եղէք մարդկային լիալիր կեանքի մէջ, ամեն մարդ իր կեանքը կրում է, ոչ շարերին է այդ բանը յայտնի, և որտեղից էլ որ բռնէք հետաքրքիր է: Բազմերանգ պարկերներում, սակաւ պարզութիւն, շատ մոլորութիւն, և ճշմարտութեան մի փոքրիկ կացծ, այդպէս կը պատրաստուի ամենալաւ խմիչքը, որ բոլորովին զուարթացնում է և նորոգում: Այն ժամանակ երիտասարդութեան ամենագեղեցիկ ծաղիկը ժողովում է ձեր խաչի առաջ և ունկնդիր է յայտնութեան. յետոյ ամեն մի քնքոյշ հոգի ծծում է ձեր գործից իր համար մեյամաշճական սնունդ, յետոյ զրգուում է կամ այս կամ այն, և ամեն մէկը տեսնում է ինչ որ կրում է իր հոգում: Դեռ նրանք իսկոյն պատրաստ են լալ և ծիծաղել, նրանք շեռ յարգում են շարժիւնն, ուրախանում են երեւոյթով: Ով որ վերջացրել է, նրա համար ոչինչ բաւարար չէ, սկսնակը միշտ շնորհակալ կը լինի:

ԹԱՏՐԵՐԳԱՎ: Ուրեմն վերադարձում ինձ այն ժամանակները, երբ ես ինքս շեռ սկսնակ էի, երբ խռնուող երգերի աղբիւրն անընդհատ նորերն էր ծնում, երբ ամպերն ինձանից ծածկում էին աշխարհը, կոկոնը շեռ հրաշքներ էր խոստանում, երբ ես քաղում էի հազարաւոր ծաղիկներ, որոնք առատութեամբ լցնում էին բոլոր ձորերը: Ես ոչինչ չունէի, և այնուամենայնիւ ունէի բաւականին ձգրումն շէպի ճշմարտութիւնը և ցանկութիւն շէպի պատրանքը: Տուր այն անզուսպ ձգրումները, խոր, ցաւալից բաղդը, ստեղծութեան ոյժը, սիրոյ զօրութիւնը, յետ տուր ինձ իմ երիտասարդութիւնը:

ԿԱՏԱԿԵՐԳՈՒ: Սիրելի բարեկամ, դու յամենայն շէպս կարօտութիւն ունեւ երիտասարդութեանը, երբ թշնամիք նեղում են քեզ մարտերի մէջ, երբ ամենաչքնաղ օրիորդներն ուժով վզովդ են փարւում: Երբ հեռւում, շփուարութեամբ հասած նպատակակէտում, հրապուրում է արագընթացութեան պսակը, երբ կրակոտ պոռոյ պարերից յետոյ գիշերները խրախճանքների մէջ արբենում են: Բայց քաջութեամբ և վայելչութեամբ յայտնի լարերին զարկելն, սքան-

չելի մօրմօնեղով մի ինքնամուխ նպատակի հետամուտ լինելը, ծեր պարօնների, այդ ձեր պարպականութիւնն է և այդ պատճառով էլ մենք ձեզ յարգում ենք ոչ պակաս: Ծերութիւնը չի շարձնում երեխայաբարոյ, ինչպէս ասում են, այլ նա մեզ գտնում է միայն որպէս իսկական երեխաներ:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ: Խօսքերի բաւականին փոխարինութիւն եղաւ, թոյլ տուէք ինձ նաեւ վերջապէս դործքը տեսնել: Մինչդեռ դուք հաճոյախօսութիւններ էք անում, կարող էր տեղի ունենալ մի օգտաւէտ բան: Ինչ օգուտ տրամադրութեան մասին շատ խօսելուց: Գանդակոտին նա երբէք չի յայտնում: Եթէ դուք ձեզ բանաստեղծ էք համարում, իշխէք բանաստեղծութեան վրայ: Ձեզ յայտնի է, թէ ի՞նչ է հարկաւոր: Մենք կամենում ենք թունդ խմիչքները ծծել: Ուրեմն անմիջապէս պատրաստէք ինձ համար դրանից: Ինչ որ այսօր չի կատարւում, վաղը կատարուած չէ: Եւ ո՞չ մի օր չպէտք է կորցնել: Վճռողութիւնը պէտք է վարահութեամբ իսկոյն կարելի բանի մագերից բռնի, այնուհետեւ նա չի կամենալ նրան ձեռքից թողնել. և այդպէս շարունակ գործում է, որովհետեւ սպիտուած է:

Գուք գիտէք, մեր գերմանական բեմերի վրայ ամեն մարդ փորձում է ինչ որ կարող է: Այդ պատճառով էլ այսօր մի՛ ինչպէք ոչ ղեկորացիաներ և ոչ էլ մեքինաներ: Գործ դրէք երկնային մեծ և փոքր լոյսը, պէտք է ասողները շռայլութեամբ դործադրէք: Զրի, կրակի, ժայռապատերի, անասունների, թռչունների ոչ մի պակասութիւն չկայ: Անցէք քայլերով նեղ տախտակաւոր մէջ ստեղծագործութեան ամբողջ շրջանը և թափառէք կշռադատած արագութեամբ երկնքից աշխարհի միջով Դէյվի Դժոխքը:

ՆԱԽԱԲԱՆ¹ ԵՐԿՆՔՈՒՄ

Տ Է Ր

ԵՐԿՆԱՅԻՆ ԽՄԲԵՐ, ՅԵՏՈՅ ՄԷՖԻՍՏՈՖԷԼ

ԵՐԵՔ ՀՐԵՅՏԼԿԱՊԵՏՆԵՐ (առաջ են գալիս)

ՌԱՓԱԾԷԼ: Արեգակն ըստ հին ձևի հնչում է համաձին երկ-
րագնդերի մէջ մրցման երգը և իր նախազծած շրջագայութիւնն
աւարտում է որոտման² քայլով: Նրա տեսքն ոյժ է տալիս հրեշ-
տակներին, թէպէտև նրան ոչ ոք չի կարող թափանցել: Անըմբռնելի
բարձր գործքերը հրաշալի են ինչպէս և առաջին օրում:

ԳԱՅՐԻՅԷԼ: Արագ, անըմբռնելի արագ պտուռում է իր շուրջն
երկրի փառահեղութիւնը: Արքայութեան լուսափայլութիւնը փո-
խարկում է մութ, զարհուրելի դիշերի: Ծովը փրփրում է լայն հո-
սանքներով ժայռերի խոր հիմքի մօտ և ժայռն ու ծովը բռնու-
թեամբ ձգւում են երկնագնդերի մշտնջենաւոր արագ ընթացքի մէջ:

ՄԻՔԱԾԷԼ: Փոթորիկները շառաչում են մրցելով ծովից շէպի
ցամաք, ցամաքից շէպի ծով և կապաղելով կազմում են չորս կողմը
սոսկալի գործողութեան մի շղթայ: Այնտեղ շանթի հարուածից
առաջ, բոցափայլում է մի կաջձակիչ աւերումն: Բայց քո պապուս-
մաքերն են, Տէր, յարգում են քո օրումն մեղմ շարժումը:

ԵՐԵՔԸ ՄԻԱՍԻՆ: Տեսքն ոյժ է տալիս հրեշտակներին, թէ-
պէտև ոչ ոք չի կարող քեզ թափանցել և քո բոլոր բարձր գործքերը
հրաշալի են, ինչպէս առաջին օրում:

ՄԷՓԻՍՏՈՓԷԼ: Որովհետև դու, ո՞վ Տէր, կրկին մօտենում և

¹ «Նախաբան երկնքում» Այս վերնագիրն առաջին տպագրութեան
մէջ տպած է առանձին թղթի վրայ: Այստեղ ժողովրդական հալեցակէտով
Ֆառուստի կեանքը ներկայացնում է երկնքի և յժովսքի կռիւը միմեանց
հետ, թէ ինչպէս Աստուած չար ոգու հետ գրաւ է բռնում Ֆառուստի հո-
գու համար: Նախաբանի հետ կարելի է կապել ժողովրդական մի պատմու-
թիւն, աչն է, ինչպէս սրբազան պատմութեան մէջ (գիրք Յոբաւ) սադա-
նան գալիս է Աստուծոյ մօտ խնդրում է Յոբին աչքից զցել: Երէօէր:

² Հին գերմանացոց մէջ իշխում էր աչն կարծիքը թէ արեգակն իր
ծագման մըջոցին որոտման ձայն է արձակում: Տացիր-Գերմանիա:

հարցնում ես, թէ ինչպէս է մեզանում ամենը գտնուում, և շուտից ինձ սովորաբար նաև յօժարութեամբ էիր տեսնում, ահա, ինձ նոյնպէս տեսնում ես ծառաների մէջ: Ներքի, որ ես չեմ կարող բարձրաթուիչ խօսքեր գործ ածել, եթէ նաև ամբողջ ակումբը հեգնութեամբ ծիծաղէր վրաս: Իմ յուզմունքն անկասկած քեզ կը ծիծաղացներ, եթէ ծիծաղի սովորութիւնը թողած չը լինէիր: Արեգակի և աշխարհների մասին ոչինչ չեմ կարող ասել, միայն տեսնում եմ, ինչպէս մարդիկ չարարւում են: Աշխարհի փոքր աստուածը միշտ մնում է նոյն տեսակի և նա նոյնպէս զարմանալի է, որպէս և առաջին օրում: Նա փոքր ինչ աւելի լաւ կ'ապրէր, եթէ շուտ նրան տեսած չը լինէիր երկնային լուսոյ ցոլքից: Նա այդ անուանում է բանականութիւն և գործադրում է միայն, որ աւելի անասուն լինի քան թէ մի որ և է անասուն: Ձեր հրամանոց թույլութեամբ, նա ինձ թուում է ինչպէս մի երկայնուոր ճուղի, որ միշտ թռչում, թռչկոտում է և իր հին երգը նոյնպէս երգում է խոտերի մէջ: Դեռ լաւ կը լինէր, եթէ միայն միշտ խոտի մէջ պարկած մնար, նա իր քիթն ամեն մի կեղտի մէջ է խրում:

Տէ՛ր: Այլ ևս ոչինչ չունեմ ինձ ասելու: Միշտ դանգաւորելու ես միայն գալիս: Միթէ երկրի վրայ քեզ համար երբէք ոչինչ կարգին չէ:

ՄԷՓԻՍՏՈՓԷԼ: Ո՛չ, Տէր, ես գտնում եմ այնտեղ, ինչպէս միշտ շատ վատ: Մարդկանց կարեկից եմ նրանց թշուառ օրերում: Այդ ողորմելիներին նաև ես ինքս չեմ կարող տանջել:

Տէ՛ր: ձանաչում ես Ծառասրին:

ՄԷՓԻՍՏՈՓԷԼ: Դժբախտիկ:

Տէ՛ր: Իմ ծառային:

ՄԷՓԻՍՏՈՓԷԼ: Ի՛րաւ, նա քեզ առանձին կերպով է ծառայում: Այդ չիմարի թէ խմածը և թէ կերածն երկրային չեն: Յուզմունքը նրան հետու է մղում: Նա իր անմութեան մասին կիսով չափ հասկացողութիւն ունի: Երկնքից պահանջում է ամենագեղեցիկ աստղեր և երկրից ամենայն մի վսեմ վայելչութիւն, և ամեն մի մօտաւորը և ամեն մի հեռավորը չի բաւականացնում նրա խոր յուզւած կուրծքը:

Տէ՛ր: Եթէ միայն այժմ էլ նա այնպէս ինձ շփոթուած ծա-

ապէ, ես խեղճն նրան շէպի լոյսը կը տանեմ: Զէ որ պարտիզպանը զիրէ երբ կանաչում է¹ տնկին, որ ծաղիկը և պտուղը պճնազարդում են հեղափոխ փարինները:

ՄԷՓԻՍՏՈՓԷԼ: Ինչ ես գրաւ բռնում: Դու նրան կը կորցնես, եթէ ինձ թոյլտուութիւն տաս՝ նրան կամաց կամաց իմ ճանապարհով տանեմ:

ՏԷՐ: Քանի նա երկրի վրայ է ապրում, այդ քեզ արգելուած չի լինի: Մարդը մոլորում է քանի շեռ նա ձգւում է:

ՄԷՓԻՍՏՈՓԷԼ: Ենթահակալ եմ՝ քեզանից, որովհետեւ մեռեալների հետ երբէք յօժարութեամբ դործ չեմ ունեցել: Ամենից շար սիրում եմ լիբը, թարմ աչտեր: Դիակի համար չեմ ես տանը: Ինձ համար այդ նոյնն է ինչպէս կապուէ մկան հետ:

ՏԷՐ: Դէ՛ լաւ, թող այդ քեզ թոյլ տուած լինի: Հեռացրու այդ ոգին իր սկզբնական աղբիւրից², և եթէ կարող ես նրան տիրել, փար նրան քո ճանապարհով շէպի վայր. բայց ամաչի՛ր եթէ ստիպուած ես խոստովանելու, որ բարի մարդն իր մութ ձգտման մէջ ուղիղ ճանապարհը լաւ է ճանաչում:

ՄԷՓԻՍՏՈՓԷԼ: Ենթա լաւ, միայն այդ երկար չի տևում, ես իմ գրաւից բոլորովին չեմ վախենում: Եթէ ես իմ նպատակին հասնեմ, թոյլ տուր ինձ լի կրօնով յաղթանակը տանել: Նա փոշի պէտք է լափի, այն էլ ակոթածանօք, ինչպէս մօրաքոյրս, այն հռչակաւոր օձը:

ՏԷՐ: Դու կարող ես այնտեղ էլ ազատ երևան գալ: Ես քեզ նմաններին երբէք չեմ արել: Բոլոր ոգիներից, որոնք բացասում են, ինձ համար պարտիզն ամենից պակաս է ձանձրալի: Մարդու գործունէութիւնը մեծ հեշտութեամբ կարող է թուլանալ: Նա աւելի շուրջով անպայման հանգստութիւն է սիրում. այդ պատճա-

¹ «Տնկին կանաչում է» չի նշանակում թէ գարնանը տնկին կանաչում է, այլ նշանակում է— աճում է: Բանաստեղծը կամենում է ասել, որ Ֆառուսը ինչպէս մատաղահաս ծառ շեռ աճում է, կանաչում է, եռում է: Շրէօէր:

² «Սկզբնական աղբիւր» նշանակում է Աստուած կամ անպայման իմաստութիւն, որից ծագում են մարդու համար բոլոր բարձր գաղափարները: Շրէօէր:

ռով էլ յօժարութեամբ տալիս եմ նրան մի ընկեր, որ գրգռում է. և զործում է և պէտք է ստեղծագործի որպէս սաստանալ. Իսկ շուք, չաստուածներ չարազապ որդիք, ուրախացէք կենդանի, շքեղ գեղեցկութիւններով: Մշտնջենաւոր հիւթը, որ յաւիտեան զործում և ապրում է, թող ձեզ ընդգրկէ սքանչելի կապանքների սիրով. և ինչ որ տապանւում է երերուող երևոյթի մէջ, ամրապնդէք յարապեւեռներով:

(Նրկինքը փակում է, հրեշտակապետները միմեանցից բաժանւում են):
ՄԻՓԻՍՏՈՓԷԼ (միայն): Ժամանակ առ ժամանակ յօժարութեամբ եմ տեսնում ծերուկին՝ և զգուշանում եմ նրա հետ յարաբերութիւնս կտրելուց: Շատ գեղեցիկ է, մի միտ պետի կողմից, նոյն իսկ սաստանալի հետ այդպէս մարդկօրէն խօսելը:

ՈՂԲԵՐՔՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԵԱՐ

Գ Ի Շ Ե Ր

ՓԱՌՈՒՍ: (Կամարակապ, բարձր, նեղ, գոթական ւենեակում անհանգիստ նստած սեղանի մօտ, բաղկաթուռի վրայ): Ո՛հ, ջերմ աշխատանքով, հիմնովին ուսումնասիրել եմ փիլիսոփայութիւնն, իրաւաբանութիւնը և բժշկաբանութիւնը, ափսոս նոյնպէս և աստուածաբանութիւնը. ահա այսօրեւ կանգնած եմ, ես խեղճ չիմարս, և նոյնքան զիպուն եմ որքան առաջ էի: Մագիստրոս եմ անուանւում, անուանւում եմ նաեւ յոքտոր և արդէն տասնեակ տարիներ աշակերտներիս վաչր ու վեր, խեղ ու թիւր տանում եմ քաջ առքաջ և տեսնում եմ, որ մենք ոչինչ չենք կարող իմանալ: Այդ համարեա աչրում է սիրտս: Իրօք ես աւելի խոհուն եմ քան թէ բոլոր տիմարները, յոքտորները, մագիստրոսները, գրաւիները, և տէրութիւնները. ինձ չեն տանջում ոչ մի երկբայութիւն, ոչ մի երկմտութիւն. չեմ երկնում ոչ յժովքից, ոչ սաստանալից. հէնց այդ պատճառով կորզած է ինձանից ամեն մի ուրախութիւն: Ձեւ երե-

¹ Տիրոջը:

ւակայում, որ մի բան ուղիղ գիտեմ, չեմ երեւակայում, որ կարող եմ ուսուցանել, մարդկանց լաւագուցել և շարձնել: Չունիմ նոյնպէս կայք, ոչ փող, ոչ պատիւ և ոչ աշխարհի շքեղութիւն: Ո՛չ մի շուն չի կամենայ անց տեսակ երկար ապրել: Այդ պատճառով ես ինձ նուիրել եմ գիւթաբանութեանը, որ ոգու զօրութեան և խօսողութեան միջոցով ոչ սակաւ գաղտնիքներ ինձ յայտնի լինեն, որպէս զի ստիպուած չլինեմ այլ ևս քրտնաթոր ասել այն, ինչ որ չգիտեմ, որպէս զի իմանամ թէ փիեզերքն ինչ է պարունակում իր խորքերում, տեսնեմ բոլոր գործող ոյժերը և սաղմերը և այլ ևս խօսքերի յետևից չընկնեմ:

Մի գուշ, լի լուսնեակ, եթէ վերջին անգամ նայէիր իմ տանջանքիս վրայ, շու, որին այդքան զիշերներ արթուն հետեւել եմ այս սեղանիս առաջ, այն ժամանակ, շու, փխրալից բարեկամ, կերեայի ինձ զրքերի ու թղթերի վրայ: Այն եթէ կարողանայի լեռնագագաթների վրայ քո սիրելի լուսոյ մէջ քսուել, ոգիների հետ քարանձաւի շուրջը ճախրել, արօրների վրայ քո աշխատող ձէջ տարուբերուել, գիտութեան բոլոր տանջանքներից ազատուած քո ցօղի մէջ առողջաբար լողանալ:

Աւաղ, մի՞թէ, շեռ ես բանտում եմ: Անիծումս միտին որմնախորշ, ուր մինչև անգամ երկնային քաղցր լոյսը նկարէն սպակիներով մթնաշաղ է թափանցում: Սահմանափակուած այս զրքերի շեղծով, որ ցեցերը կրծում են, փռնին ծածկում է, որ մինչև կամարի բարձունքը պատում է մի մրորած թուղթ: Չորս կողմը շարած սրուակներով, տուփերով, դործիներով լի խցած, պապական տնային իրեղէնները մէջը կիտած: Այս է քո աշխարհը, այս անուանւում է աշխարհ:

Եւ շու հարցնում ես, թէ ինչո՞ւ սիրագր երկիւղով սեղմում է կրծքումդ, ինչո՞ւ մի անբացատրելի ցաւ խափանում է կեանքիդ բոլոր շարժումները: Կենդանի բնութեան փեղ, որի մէջ Աստուած մարդկանց ստեղծեց, քեզ ծխի և բորբոսի մէջ շրջապատում են միայն կենդանիների կմախքները և մեռելների ոսկրները:

Վեր կաց, փսխիր գէպի լացնադարած շաշոր: Եւ այս խոր-

հըրդալի գիրքը, Նոստրադամուսի¹ սեփական ձեռքով գրածը, մի՞թէ չէ կարող քեզ համար գոհացուցիչ ուղեցոյց լինել: Այն ժամանակ շուրջ կը ճանաչես ասորիները ընթացքը՝ և, եթէ բնութիւնը քեզ հրահանգէ, այն ժամանակ հոգուդ ոյժերն երևան կը գան և կ'իմանաս թէ ինչպէս է խօսում մի ոգի միւս ոգու հետ: Իզուր ես կարծում, որ չոր ու ցամաք խոհամարութիւնն աչտաւի կը բացաւրէ քեզ այդ նուիրական նշանները: Դ՛ուք, ոգիներ, շուք սաւառնում էք իմ շուրջը, պատասխանեցէք եթէ շուք ինձ լսում էք:

(Գիրքը բաց է անում և տեսնում է Մակրոկոսմուսի² նշանները):

Ո՛հ, այս հայեացքից ինչ բերկրանք է յանկարծ հոսում իմ բոլոր ըմբռնելիքներովս: Ես զգում եմ ինչպէս երիտասարդական սուրբ կեանքի բաշխը նոր շողացուցուած վազում է նհարդերովս: Մի՞թէ այդ մի Աստուած էր, որը գրել է այս նշանները, որոնք հանգստացնում են իմ ներքին վրդովմունքները, խեղճ սիրտս լցնում ուրախութեամբ և խորհրդալի շրջամբ երևան են հանում իմ շուրջը բնութեան ոյժերը: Մի՞թէ ես Աստուած եմ: Ինձ համար ինչպէս լոյս է բացւում: Ես տեսնում եմ այս պարզ դժեբում, որ գործող բնութիւնը շրած է հոգուս առաջ: Ես աչժամ եմ միայն հասկանում, ինչ է իմաստունն ասում: Ետինների աշխարհը փակ չէ, քո խելքն է փակ, քո սիրտն է մեռած: Վեր կաց, աշակերտ, անխոնջ լուսն երկնային կուրծքդ արշալոյսի մէջ:

(Նալում է նշաններին):

Ինչպէս ամեն ինչ մանւում է ի մի ամբողջութիւն, մէկը միւսի մէջ գործում և ապրում է: Ինչպէս երկնային ոյժերն³ ելնում,

¹ «Նոստրադամուս» անուանում էր իրեն Միշէլ Դը Նոստրադամը, որ ծնունդ 1503 թ. Պրովանսում և վախճանուեց 1566 թ.: Սա երեւելի աստղաբաշխ և բժիշկ էր, որի նախագուշակութիւնները շատ լալտնի էին: Երեւի շրա ձեռագիր գրուածքը Գաուսրի ձեռքին է եղել: Բայց ալդ դեռ ապացուցուած չէ:

² «Մակրոկոսմուս» բառ առ բառ նշանակում է տիեզերք, որի փոքրիկ պատկերը մարդն է և որին անուանում էին «Միկրոկոսմուս»: Մակրոկոսմուսի նշաններ ասելով պէտք է երևակայել աշխարհի նշաններ ինչպէս աստղաբաշխական նշաններն են:

³ Կենաց լիժերի մի գեղեցիկ անձնաւորումն է, որոնք ներդաշնակութեամբ միասին գործում են և կենդանութիւն են տալիս իրենց ելնել

իջնում են և միմեանց տալիս են ոսկէ շուկեր, օրհնութիւն բուրոյ երերումներով երկնքից թափանցում են երկրի միջով, ամեն ինչ ներշնչանակ են հնչեցնում:

Ի՛նչ տեսարան. բայց ախ, տեսարան միայն: Անսահման բնութիւն, ուր ըմբռնեմ քեզ, ձեզ, ստիճաններ ¹, ուր: Դուք ամբողջ կեանքի աղբիւրներ, որոնցից կախ է երկինքը և երկիրը, շէպի այնտեղ է ձգտում թառամած կուրծքը— շուք բշտում էք, շուք ջուր էք տալիս, իսկ ես ի՞նչում եմ այդպէս տանջւում:

(Ակամաջ բաց է անում գիրքը և տեսնում է երկրի ողու նշանը):

Ինչպէս տարօրինակ է ներգործում այս նշանն իմ վրայ: Դու, երկրի ոգի, շուք ինձ աւելի մօտ ես: Արդէն զգում եմ ոյժերս աւելի բարձր, արդէն վառւում եմ ինչպէս նոր գինուց: Ես զգում եմ քաջութիւն վստահանալ աշխարհի մէջ մարներու, կրել երկրի ցաւը, երկրի բաշխը, կուռել փոթորիկների հեղի և չլախնալ նաւաբեկութեան ճաշթումից: Գլխիս վերեն թխսում է, լուսինը թաղցնում է իր լոյսը, լապտերը հանգչում է: Գոլորշի է բարձրանում: Կարմիր ճառագայթներ են փայլում զլսիս շուրջը: Կամարից սարսափ է փչում և ինձ պատում: Ես զգում եմ, շուք ճախրում ես իմ շուրջը, ո՞վ ցանկալի ոգի: Յայտնութիւն: Ո՛հ, ինչպէս սրտումս խոցում է: Բոլոր ըմբռնելիքներս բացւում են նոր զգացմունքների համար: Ես զգում եմ, որ ամբողջ սիրտս քեզ է նուիրում: Դու պէտք է, պէտք է յայտնուես, եթէ նաև կեանքս տալու լինեմ:

(Գիրքը վերցնում է, ոգու նշանը խորհրդաւոր կերպով արտասանում է: Փայլում է կարմրագոն բոց, ոգին երևում է բոցի միջից):

Ո՞հ: Ո՞վ է ինձ կանչում:

ՓԱՌԻՍ (շուք գալով): Սարսափելի շէպ:

Ո՞հ, Դու ինձ ուժգին քաշեցիր, երկար կանչելով իմ աշխարհից շուրս՝ բերիր. և այժմ...

Իջնելով, ոսկէ շուկեր են տալիս մէկը միւսին, որոնց մէջ լցուած են կենսատու ուժեր, որոնք կախարդութեամբ թափանցում են բոլոր կազմածքներով և առաջ են բերում կեանք:

¹ «Ստիճաններ» ալիսնքն բնութեան այն ուժերը, որոնք կեանք են տալիս:

ՓԱՌՈՒՍՏ: Ո՛հ, քեզ չեմ կարողանում տանել:

ՈԳԻ: Դու շնչասպառ աշաչում էիր ինձ նայել, իմ ձայնս լսել, իմ երեսս տեսնել: Ինձ սրիպեց հոգուդ ուժեղ աղաչանքը. ահա ես Սյդ Բնչ հէք սարսափ է պատում քեզ, գերմանրդ: Ո՛ւր է հոգւոյ գոչիւնն: Ո՛ւր է այն կուրծքը, որ իր մէջ մի աշխարհ է ստեղծել ու տանում, զուրգուրում է, որը փքւում էր ուրախութեան շողով, իրեն մեզ ոգիներին հետ հաւասար բարձրացնելու համար: Ո՛ւր ես, շու, Ֆառուս, որի ձայնը հասաւ ինձ, որը ամբողջ ուժերով ձգտում էր շէպի ինձ: Սյդ շու ես, որ զգալով իմ շնչիւնը, կեանքի ամեն խորքերում, շողում է որպէս մի երկչոր շիւրաշարժ որդ:

ՓԱՌՈՒՍՏ: Բոցածին, միթէ պէտք է քեզ զիջանիմ: Սյդ ես եմ, Ֆառուսին եմ, քո հաւասան եմ:

ՈԳԻ: Կեանքի¹ ալիքներում, գործերի փոթորիկում ելնում, իջնում, շարժւում եմ այս ու այն կողմ: Մոռենք և մահ, մի յաւիտեական ծով, մի փոխադարձ շարժումն, մի վառվառն կեանք, այդպէս եմ բանում ժամանակի գոչող ճախարակի վրայ և գործում եմ Աստուածութեան² կենդանական զգեստը:

ՓԱՌՈՒՍՏ: Դու, գործոն ոգի, շու որ թափառում ես լայնափարած աշխարհի շուրջը, որքան ինձ մօտ եմ զգում քեզ:

ՈԳԻ: Դու հաւասար ես այն ոգուն, որին շու ըմբռնում ես, ո՛չ ինձ: (Անհետանում է):

ՓԱՌՈՒՍՏ: (Աքանալով): Ո՛հ քեզ, հապառում ես, Աստուածութեան համապատկեր, մինչև անգամ ոչ քեզ: (Դուռը ծեծում են):

Ո՛հ մահ, ճանաչում եմ, այդ իմ աջակիցն է: Իմ ամենագեղեցիկ բաղդս ոչնչանում է, որովհետև այդ բիրտ իմաստակը պէտք է խանգարի այդ լիութիւնը երևոյթների:

(Ապագէրը քնազգիտը հագած, գիշերուաչ գդակը գլխին, մի լապտեր ձեռքին: Ֆառուսն ակամաչ երեսը շարձնում է նրան):

ՎԱԳՆԵՐ: Ներեցէք, լսում եմ շուք ճամարտակում էք: Ան-

¹ Յաջորդ խօսքերով նկարագրում է կեանքը երկրի վրայ: Նրկրի ոգին գործում է ալեկոծ կեանքում:

² Աստուածութեան զգեստ, նշանակում է մարմնական աշխարհ:

շուշար կարդում էիք մի յունական ուղբերգութիւն: Ես կը ցանկացի այդ արուեստից մի օգուտ քաշել, որովհետեւ այժմ այդ մեծ ներգործութիւն ունի: Ես շատ անգամ գովասանք եմ լսել, թէ մի խեղկատակ կարող է քահանային սովորցնել:

ՓԱՌԻՍ: Ա՛յո, եթէ քահանան խեղկատակ է, որ կարող է մի մի ժամանակ պատահել:

ՎԱԳՆԷՐ: Ա՛յո, երբ մարդ այդպէս փակուած է լինում իր թանգարանում և հազիւ փոփոխ օրն է փետնում աշխարհը, հազիւ մի յիշողով միայն հետուից, ինչպէս պէտք է նրանց համոզելով առաջնորդել:

ՓԱՌԻՍ: Եթէ դուք այդ չէք զգում, չէք էլ հասնիլ այդ բանին. եթէ այդ չէ բխում հոգուց, մե՞ն հաճուքով չէ ներգործում ունեկրիներին վրայ: Դուք միշտ նստած էք, մէկը միտի հետ կացնում էք, խառնուման կերակուր էք պատրաստում մի ուրիշի խնջոյքի մնացորդներից և դուրս էք փչում հանգչող բոցը ձեր մոխրակոյտից: Երեխաներին ու կապիկներին կը զարմացնէք, եթէ այդպիսի ճաշակ ունէք: Սակայն դուք երբէք չէք կարող սրտերը միացնել, եթէ նոյնը ձեր սրտից չէ բխում:

ՎԱԳՆԷՐ: Միայն արեւնաբանութիւնն է կազմում ճարտասանի բաղդը. ես այդ լաւ եմ գիտում, որ դեռ շատ եմ չեւ մնացել:

ՓԱՌԻՍ: Թող նա որոնի արդար վաստակ: Թող նա չլքի շաղակրանք յիմար: Արդարահայեաց խելքը, ուղիղ միտքը չնչին ճարտարութիւնով էլ ինքն իրենց ցոյց կը տան: Եւ եթէ կարիք ունիք մի բան ասելու մի՞թէ հարկաւոր է խօսքերի չեփեից ընկնել: Ա՛յո, ձեր ճառերը, որոնք այդպէս փաշտուն են, որոնց մէջ խոստովում էք մարդկութեան հարուածները, անգոր են, ինչպէս միգրեթ քամին, որ աշնանը չորացած տերեւների միջով շաշում է:

ՎԱԳՆԷՐ: Ա՛յո, Տէր Աստուած, զեղարուեստն երկարատե է, և մեր կեանքը կարճ: Իմ քննադատական աշխատութեան ժամանակ, յաճախ գլխիս, կրճքիս համար երկիւղ եմ կրում: Որքան դժուար է միջոցներ ձեռք բերել, որոնցով կարելի լինէր մինչև աղբիւրները հասնել: Եւ առաջ քան մարդ միայն կէս ճանապարհին է հասնում, մէկ էլ փետար պէտք է մեռնի որպէս մի խելճ սատանայ:

ՓԱՌԻՍ: Եթէ մաղաղաթն է այն սուրբ աղբիւրը, որից

մի կումը չաւիտեան յագեցնում է ծարաւը: Զովութիւն չես ստանայ, եթէ Դա սեպհական հոգուցդ չի բղխում:

ՎԱԳՆԵՐ: Ներեցէք, մեծ զուարճութիւն է փոխադրուել ժամանակների ոգույ մէջ, նայել թէ մեզնից առաջ ինչպէս է մտածել մի իմաստուն և ինչպէս մենք յետոյ այդ վերջնականապէս հիանալի կերպով հեռու ենք տարել:

ՓԱՌԽՍԾ: Այո, հեռու մինչև աստիճան: Բարեկամ, անցած ժամանակները մեզ համար մի գիրք է եօթը կնիքներով¹: Ինչ որ Դուք անուանում էք ժամանակների ոգի, այդ իսկապէս մարդկանց սեպհական ոգին է, որի մէջ ժամանակները ցլանում են: Արդարեւ այդ յաճախակի մի վիշտ է: Առաջին հայեացքից յետոյ մեզնից խուսափում է: Լուսացածի մի տակաւ և ցնցոտիների մի պահարան, ամենաշարք մի գլխաւոր և պերական² գործողութիւն, զեղեցիկ իրաւագիրական սկզբունքներով, որոնք իրօք վայել են տիկիւնների³ քերանում:

ՎԱԳՆԵՐ: Բայց աշխարհը, մարդու սիրտն ու ոգին, ամեն մէկը կը ցանկար մի բան Դրանցից զիրենալ:

ՓԱՌԽՍԾ: Այո, նայած թէ ինչ է նշանակում այդ զիրենալը: Ո՛վ կը համարձակուի երեխային իսկական անունով անուանել: Այն սակաւները, որոնք Դրանից մի բան իմացել են, որոնք բաւական չիմար են եղել, որ իրենց լի սրտերը չեն պահել, ամբոխին յայտնել են իրենց զգացմունքը, իրենց հայեացքը, նրանց շարունակ խաչել, աչրել են: Խնդրեմ, բարեկամ, խոր գիշեր է, այս անգամ պէտք է ընդհատենք:

ՎԱԳՆԵՐ: Ես ուրախութեամբ շարունակ արթուն կը մնայի, որ ձեզ հետ այդպէս զիրենաբար խօսէի: Բայց վաղը, ինչպէս զայսկի առաջին օրը, թողլ տուէք ինձ մի քանի հարցեր: Եռանդով նուիրել եմ ինձ ուսումնասիրութեանը: Թէպէտ և շատ զիրեմ, սակայն կը ցանկացի ամենը իմանալ (Գնում է):

¹ Այսինքն փակած է ինչպէս չափունութեան գիրքը:

² Այսինքն ներկայացնում է մի տէրութեան քաղաքագիրական գործողութիւնը, ինչպէս այդ կադարում էին բնի վրալ Դերասանական խումբերը իրենց նշանակութիւնը բարձրացնելու համար:

³ Խաւալիքներ:

ՓԱՌԽՍՏ (միայն) Ինչպէս միայն չի նուազում այն գլխից յոյսը, որը կաշում է աննշան նիւթին, ազահ ձեռքով զանձ է փոր- փրորում և ուրախ է, երբ անձրեային որդեր է գտնում:

Կը համարձակուէր արդեօք հնչել մի այդպիսի մարդկային ձայն այստեղ, ուր ինձ շրջապատում էր ոգիների լիութիւն: Բայց աւաղ, այս անգամ շնորհակալ եմ քեզնից, երկրի բոլոր զաւակների ողորմելուց: Դու կորզեցիր ինձ յուսահատութիւնից, որն արդէն ուզում էր խնդր ու միտքս խառնակել: Այս, երեւոյթն այնպէս հսկայական էր, որ ես պէտք է ինձ իսկապէս զգայի իբրեւ մի թզուկ:

Ե՛ս Աստուածութեան համապատկեր, որ իրեն արդէն բոլորովին մօտ էր համարում մշտնջենաւոր ճշմարտութեան հայելուն, ինքն իրեն վայելում էր երկնային վայլքի ու պարզութեան մէջ և ձգել էր իրենից երկրի զաւակի կոչումը: Ես առաւել քան Քերովբէն, որի ազատ ոյժը նախազգացութեամբ պարծենում էր, թէ արդէն հոսում է բնութեան հրալիների միջով և գործելով վայելում էր աստուածային կեանք, ինչպէս ես պէտք է այդ քաւեմ: Մի որոտածայն խօսք ինձ տապալից:

Ես չպէտք է պարծենամ, որ քեզ հաւասար եմ: Ոյժ ունեցաց քեզ ձգել Դէսի ինձ, բայց ոյժ չունեցաց քեզ պահելու: Այն երջանիկ ակնթարթում ես ինձ զգում էի որքան փոքր, որքան մեծ: Դու ինձ անզխաբար յետ մղեցիր մարդկանց անորոշ վիճակը: Ո՞վ է ուսուցանում ինձ՝ ինչից պէտք է խուսափեմ: Պէտք է արդեօք հնազանդեմ այն ձգտումին: Աւաղ, հէնց մեր գործերն, որպէս և մեր տանջանքները խափանում են մեր կեանքի ընթացքը:

Ամենաշքեղին, ինչ էլ որ ոգին սրացել է, խառնում է միշտ աւելի և աւելի օտար նիւթի: Երբ մենք հասնում ենք այս աշխարհի բարիքին, այն ժամանակ լաւագոյնը համարում է պտորանք և ցնորք: Այն հիւանալի զգացմունքները, որոնք մեզ կեանք են տուել, ընդարմանում են երկրային խռնում:

Եթէ երեակացութիւնն արի թռիչքով և լիացոյց ընդարձակում է Դէսի մշտնջենաւորը, նրան նոյն իսկ մի փոքրիկ տարածութիւն բաւական է, եթէ բաղդը բաղդի վրայ ջարդ ու փռուր է լինում ժամանակի յորձանքի մէջ: Հոգսը խոր սրտի մէջ իսկոյն բուն է դնում, այնտեղ պարծառում է զաղտնի ցաւեր, անհան-

գիտի օրօրում է և խանդարում է զուարճութեանը և հանգստութեանը, նաև ծածկում է միշտ նոր շինականներով. նա կարող է յայտնուել որպէս փուն ու փեղ, որպէս կին ու զաւակ, որպէս կրակ, ջուր, շաշմիկ և թոյն: Դու գիտում ես ամենից, ինչ որ քեզ չի վերաբերում և ինչ որ երբէք չես կորցնում, այդ միշտ պէտք է ողբաս:

Չսպուռացնելիս հաւասար չեմ: Այդ չափազանց խոր զգացուցիչ: Հաւասար եմ որդիներին, որ փոշի է փորփրում, որին, ինչպէս նա փոշու մէջ կերակրուելով ապրում է, շրջմովիկի ոտնակովը ոչնչացնում, թաղում է:

Փոշի է՞ արդեօք այդ բարձր պարը, որ ներկայում է ինձ իր հարիւր փախտակաշարերից: Յնցօփին է՞, որը հազար տեսակի մոտիլիքներով այս ցեղերի աշխարհում խոչնդոյ է լինում ինձ: Այսփեղ պէտք է գտնեմ, ինչ որ ինձ պակասում է: Կարելի է, ես պէտք է կարգամ հազարաւոր դրքերում, որ ամեն փեղ մարդիկ իրենք իրենից փանջել են, որ այս ու այնփեղ եղել է մի բաշխուհոր: Դառնարկ գանգ, շու լինչ ես այդ փեղից հեղնօրէն ծիծաղում: Կարծես թէ քո ուղիղն, ինչպէս իմը, մի ժամանակ շփոթուած է եղել, որոնել է յոյս որ և է ծանր մթնաշաղում բաշխուիլ շէպի ճշմարտութիւնը, սաստիկ և ողորմելի կերպով մոլորւել է: Դժուր գործիքներ, անշուշտ ծաղրում էք ինձ անիւով ու արամուկներով, զլաններով ու աղիղներով: Ես կանգնած էի դրան մօտ, դուք պէտք է բանալի¹ լինէիք: Թէպէտև ձեր մօրուքը² գանգրուսի է, սակայն նիգը չէք բարձրացնում: Խորհրդաւոր լոյս օրուայ մէջ, բնութիւնը չի թողնում իր քօլը յափշտակել և ինչ որ չէ կամենում քո ոգուն յայտնել, այն շու չես կարող ուժով ձեռք բերել նրանից բառնալիքներով³ և պրոպագանդներով: Դժուր, հիմն գործիք, որ ես չեմ գործադրել, դու այսփեղ դրուած ես միայն այն պարճաւով, որ հայրս էր քեզ գործածում: Դժուր, հիմն ճախարակ, դու կը մրոպուես քանի որ այս սեղանի վրայ աղօտ կանթիքը մտում, ծխում է: Աւելի շուտով կը

¹ Բնութեան գաղտնիքը բանալու համար:

² «Մօրուք» անուանում են բանալու այն կեռ մասը, որ մտնում է կողպէքի մէջ:

³ Լինգ:

վապնէի ես իմ սակաւը, քան թէ սակաւով բռնաւորուած, այս-
տեղ քրտնիմ: Ի՞նչ որ շու նախնիքներից ժառանգել ես, ձեռք բեր
այն, որ տիրես նրան: Ինչից օգուտ չեն քաշում մի ծանր բռն է:
Միայն ինչ որ վայրկեանն է սրեղծում, սրանից նա կարող է օգուտել:

Սակայն հայեացքս ինչու է սեւեռում այն տեղի վրայ: Մի թէ
այն շշիկն աչքերիս համար ժառանգ է¹: Ինչու ինձ համար յան-
կարծ ախորժելի լուսաւորում է, կարծես թէ գիշերուայ անտա-
ռում լուսնի փայլը շրջարկում է մեզ:

Ողջունում եմ քեզ, շու միակ սրուակ, որ ես երկիւղածու-
թեամբ այժմ վայր եմ բերում, քեզանում յարգում եմ մարդկանց
սրամտութիւնը և արուեստը: Դու բովանդակիչ սքանչելի, մահա-
բեր հիւթերի, շու մաղ բոլոր մահաբեր նուրբ ոյժերի, ցոյց տուր
սիրոջ քո շնորհը: Քեզ տեսնում եմ, ցաւը մեղմանում է, ձեռքս
եմ առնում քեզ, ձգտումը նւագում է, ոգու հոսանքը հեղգհեղէ
յետ է քաշում: Արտաքսում եմ շէպի ընդարձակ ծովը, մականթա-
ցութեան հայելին փայլում է ոսկերիս տակ, մի նոր օր յանկուցա-
նում է շէպի նոր եղբայր:

Մի հրակառք թիթեւ ճոճալով սաւառնում է շէպի ինձ: Ես
ինձ պատրաստ եմ զգում նոր շաւղով եթերը թափանցել շէպի
մաքուր զործունէութեան նոր աշխարհներ: Այս վսեմ կեանքը, այս
Աստուածային երջանկութիւնը: Դու, որ երբեմն որդէի և ար-
ժանի ես դրան: Այո, վստահութեամբ դարձրու միայն թիկունքդ
երկնային սքանչելի արեգակին: Յանդգնիր ուժգին բանալ դրները,
որոնց առջև ամեն մէկն յօժարութեամբ է սպրդում: Այժմ ժամա-
նակ է գործերով ապացուցել, որ տղամարդի արժանաւորութիւնը
չէ զիջանում աստուածների վսեմութեանը: Չդողալ այն մութ
խորքի առջև, ուր երեակայութիւնը դարապարտում է իրեն չա-
տուկ պանջանքի, դիմել այն անցքին, որի նեղ բերանի շուրջն ամ-
բողջ շփոթքը բոցավառում է: Ուրախութեամբ վճռել, անել այդ
քայլը և եթէ նաեւ վրանգաւոր լինի, հոսել շէպի ոչինչը:

Այժմ իջիր, բիւրեղեայ պարզ ըմպանակ, շուրս եկ հին պա-
տենից, որի մասին շատ տարիներ չեմ մտածել: Դու փայլում էիր

¹ Մագնիտ.

նախնեաց խնջոյքներում, ուրախացնում էիր ծանրաբարոյ հիւրերին, երբ քեզ մէկը միւսին էր ընդձեռնում: Խմոյի պարպքը՝ յանգով բացաւրել բազմաթիւ պարկերներից արուեստական հարուստ շքեղութիւնը, մէկ անգամից շատարկել մինչև յատակը, յիշեցնում է ինձ երիտասարդութեան շատ գիշերները: Այժմ ես քեզ չեմ առաջարկի ոչ մի յրացու, ես չեմ ցոյց տալ իմ սրամտութիւնը քարուեստի վերաբերմամբ: Այստեղ մի հիւթ է որ շուտ է արեցնում: Նա մոյզ հեղուկով լցնում է քո մէջը, որը ես պատրաստուել եմ, որը ես ընտրում եմ: Թող այս վերջին կուսն ամբողջ հոգով նուիրուած լինի արշալոյսին, որպէս հանդիսաւոր բարձր ողջոյն: (Ըմպանակը դնում է շրթունքին):

ԶԱՆԳԱԿԻ ԶԱՅՆ ԵՒ ԽՄԲԵՐԴ

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԴԱՍ: Քրիստոս յարեաւ, խնդութիւն մահկանացուին, որին կաշկանդում էին եղծանիչ, սպրդող, ժառանգաւոր պակասութիւնները:

ՓԱՈՒՍԾ: Խոնջ խոր մրմունջ, ինչ պարզ հնչիւն ուժով հեռացնում է բաժակը բերանիցս: Դուք խուլ զանգակներ, աւելում էք արդէն զարկի առաջին հանդիսաւոր ժամը: Դուք, շատեր, արդէն երգում էք մխիթարիչ երգը, որ մի ժամանակ հնչեց թաղման գիշերը հրեշտակների շրթունքներից, — մի նոր շաշնակցութեան գրաւական:

ԿԱՆԱՆՅ ԽՄԲԵՐԴ: Մենք նրան համեմներով խնամեցինք, մենք նրա հաւաքարիմներս նրան թաղեցինք, փաթաթել էինք կտաւով ու երիզներով, ակս, և մենք այլ ևս Քրիստոսին այստեղ չենք գտնում:

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԽՄԲԵՐԴ: Քրիստոս յարեաւ, երջանիկ է սիրողը, որը շիմացաւ որսմեցուցիչ, փրկարար և վարժեցնող փորձին:

ՓԱՈՒՍԾ: Դուք, երկնային հզօր և մեղմ հնչիւններ, ինչ էք որոնում ինձ փոշու մէջ: Հնչեցէք այնտեղ, չորս կողմում, ուր կան մեղմ մարդիկ: Պարգամաւորութիւնը լաւ լսում եմ, բաց ինձ պակասում է հաւարը: Հրաշքը հաւաքի ամենասիրելի զաւակն է: Զեմ համարձակում ձգտել դէպի այն աշխարհները, օրտելից հընչում է սքանչելի լուրը: Եւ այնուամենայնիւ ինձ, մանկութիւնից

այդ հնչիւնին սովորածին, այժմ էլ ինձ յետ է կանչում շէպի կեանքը: Մի ժամանակ միաշաբաթուայ խորհրդաւոր օրին, իջնում էր վրաս երկնային քաղցր համբոյրն, այն ժամանակ հնչում էր այնքան խորհրդաբար զանգի հնչման լիութիւնը և մի ալօթքն էր եռանդուն վայելք: Մի անհասկանալի քաղցր տենչանք մղում էր ինձ անցնել անտառի, արօպների միջով և հազարաւոր ջերմ արցունքների տակ ես զգում էի ինչպէս իմ համար մի աշխարհ էր գոյանում: Այս երգը մտաբերում էր մանկութեան զուարթ խաղերը, գարնան րօներն — ազատ բաղդը: Յիշողութիւնը յետ է տանում ինձ այժմ իմ մանկական զգացմունքով, վերջին ծանր քայլից: Ո՛հ, հնչեցէք անընդհատ, շուք երկնային քաղցր երգեր: Արցունքը թափում է, ես նորից շառնում եմ շէպի երկիրը:

ԱՌԱՔԵԱՆՆԵՐԻ ԽՄԲԵՐԳ: Թաղածն արդէն ամբարձել է, կեցող բարձրեալը սքանչելապէս բարձրացել է: Նա հաճոյքի մէջ է, մերձ սպեղծագործիչ ուրախութեանը: Աւաղ, երկրի կրճէի վրայ մենք տանջանքի համար ենք: Նա, մեզ իւրացիներին թողից այստեղ տառապանքի մէջ: Աւաղ, Տէր, մենք ողբում ենք քո բաղդը:

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԽՄԲԵՐԳ: Քրիստոս յարեաւ ապականութեան ծոցից: Ուրախութեամբ ազատէք ձեզ կապանքներից: Ձեզ, նրան գործնականապէս փառաբանողներին, սէր ցոյց տուողներին, եղբայրաբար ճաշակողներին, քարոզելով ճանապարհորդողներին, երջանկութիւն խոստացողներին, ձեզ մերձէ Տէրը: Նա ձերն է:

(Շարունակելի)